ԺԱՄԱՆԱԿԸ ՀԻՄԱ Է

Գրեց՝ Մ. ՍԱՐԿԱՐԵԱՆ

«Վերածնունդ»-ի վերջին փոստացի յայտարերութիւնները դաշնակցական մի շարք լիդերների ֆաշիստական կլիքին հակելու կապակցութեամբ, ծիծաղելի շփոթութիւն է առաջ բերել ոչ միայն տեղիս դաշնակների, այլ և նրանց հին ու նոր, միամիտ ու սրամիտ կողմնակիցների մէջ։

Ցաւախ կարելի է տեսնել կաֆներում կամ տներում զայրոյթից կարմրած դէմքով ,,չեզոք" անհատների, որոնք փրփուրը բերնին զարկում են բռունցքը սեղանին ու ճանչում.

— Հիմա էդ բաների ժամանակն է՞...

— Դա ստորութիւն է...դաւաճանութիւն է ընդհանուր հայութեան շահերին։ Այն էլ մի այսպիսի ժամանակ...

— Գրազ կգամ, որ դրանք կեղծ նկարներ են։ Վարկաբեկել հայութեանը մի ասպիսի ժամանակ, դա...դա...

Ինչպիսի՞ ժամանակ պարոններ։

Եթէ դուք ակնարկում էք թրքական հարցը, եթէ կարծում էք, որ դաշնակցութեան պրեստիժը, իբրև Ղարսն ու Ադդահանը գտնող կոլումբոսների, կարող է տուժել Դրօների ու Նժդէհների դաւաճանութեամբ՝ պէտք է ասել, որ իզուր էք անհանգստանում։ Կուսակցութիւնները, ի պղտոցոյց է տալիս պատմութիւնը, երբէք զերծ չեն եղել նման դաւաճաններից, որոնցից մաքրուելով նրանք աւելի զօրեղացել են ու ամրացել։

Եթէ ակնարկում էք հայրենազուրկ հայութեան իբ նախկին օջախները մեկնելու նախօրեակը և գտնում էք, որ նման ժամանակ չպիտի վարկաբեկել հայրենիքին հաշտութեան ձեռք մեկնած դաշնակցութեանը, պիտի ասել, որ խնդրից շեղւում էք դիտաւորեալ կերպով, աչի՞ տալով հինաւուրց կասկածների։

Որովհետև իւրաքանչիւր երեխայ անգամ գիտէ, որ ուտելուց առաջ պիտի լուացուել, հագուստ փոխելուց առաջ պիտի խոստովանուել, մրցանակ ստանալուց առաջ պիտի դիմակը վերցնել...

Հարցը պարզ է դրուած։

Պարզ ու կտրուկ։

Արդեօք դաշնակցութեան լիշեալ դէմքերը դաւաճանել են հայ ազգի և հայրենիքի շահերին, թէ՞ ոչ։

Եթէ այո, դա պիտի գլուխ ու դատափետուի դաշնակցութեան կողմից։

Արդեօք դաշնակցութիւնը դէ՞մ է Սովետական Հայաստանի ներկայ վարչաձևին և համամիտ չէ՞, որ նա լինի Սովետական Միութեան հանրապետութիւնների շարքում, թէ՞ ներկայ արհաւիրքից պատերազմը ապացուցեց նրանց, որ առանց այդ Միութեան Հայաստանը հրոյ ծարակ պիտի դառնար և կուլ գնար որևէ հարևան, իմպերիալիստական

(Շար. տես Բ. էջ)

երկրի։

Եթէ այո, դաշնակցութիւնը պիտի տալ օրուայ ժամանակին համապատասխան մի դեկլարացիա։

Ժամանակը հիմա է։

Լռել այդ մասին, դա նշանակում է ծաղրել ժողովրդի հայրենասիրութիւնը, հետապնդել հին ծրագիրներն ու նրպատակները։ Գտնակոծել այդ մասին գրողներին, դա նշանակում է չընդունել Դրօների քայլը իբրև դաւաճանութիւն, համամիտ լինել այդ հայրենավաճառ քաղաքական ուղեգծին և հետևապէս թշնամի լինել Սովետական Հայաստանին։

Շինարարական լայն ծրագրները Մայր հայրենիքում առաջ են տարում տենդագին աշխուժով։ Մեր եղբայրները այնտեղ զբաղուած են վեհ, ստեղծագործական աշխատանքներով։ Միանալ նրանց հետ, մտնել նրանց մէջ առանց լուացուելու, առանց դիմակը վերցնելու՝ ոչ ոք չի կարող։

Հայրենասէր ժողովուրդը դաշնակցութեան հետ կիսելու ոչինչ չունի։ Հայրենիքը կուսակցական չէ. նա պատկանում է բոլորին։

Պ. Զրնքը պիտի հետապնդենք միայն մի նպատակ—ժամանակին գտնել թշնամիներին, դիմակազերծ անել նրանց, ով դէմ է Սովետական Հայաստանին և ով ուրոյն քաղաքական սրճագոյն ծրագրեր որոճալով՝ լռում է թշնամիների մասին, ծածկում է նրանց դաւաճանութիւնը, խարազանում է նրանց յայտարերողներին։

Մենք պատրաստ ենք ձեռք-ձեռքի աշխատել նրանց հետ, ովքեր հպարտութեամբ, առանց կեղծ ամօթի, դեն նետելով իրենց ներկայ մոմենտի համար հնացած քաղաքական ցնցոտիքը գալիս են սկսելու նոր կեանք եւ պայքարելու յանուն հայ ազգի առաջադիմութեան։

Ժամանակը հիմա է։